ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-1281[1]-13.03.2026-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 6.2-րդ հոդվածով.

«Հոդված 6.2. Քաղաքացիների՝ խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին մասնակցության սահմանափակումների ընդհանուր կանոնները

1. Արգելվում է այն քաղաքացիների մասնակցությունը սույն օրենքով նախատեսված շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, որոնք՝

1) խաղադրույքներ են կատարում իրենց անվամբ բացված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ և 928.9-րդ հոդվածների 1-ին մասերով սահմանված հատուկ բանկային հաշիվների միջոցներից.»:

2) ներկայացրել են սույն օրենքի 6.3.-րդ հոդվածի 1-ին մասով դիմում:

3) հանդիսանում են պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոններ զբաղեցնող անձիք, հանրային իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների, Կենտրոնական բանկի աշխատակիցներ:»:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց նկատմամբ սույն հոդվածով սահմանված սահմանափակումները կիրառելի չեն:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 6.3-րդ հոդվածով.

«Հոդված 6.3. Քաղաքացու կողմից իր մասնակցության սահմանափակման կարգը

1. Լիազոր մարմնին ներկայացվող դիմումով քաղաքացին կարող է պահանջել արգելելու իր մասնակցությունը շահումով խաղերին եւ ինտերնետ շահումով խաղերին: Լիազոր մարմինը ապահովում է նշված տեղեկատվության հասանելիությունը կազմակերպչին:

2.Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց մասնակցությունը խաղերին արգելվում է քաղաքացու դիմումի հիման վրա՝ դիմումի ներկայացման հաջորդ օրվանից 5 տարի ժամկետով: Ընդ որում յուրաքանչյուր

ժամկետի ավարտից հետո այն կրկին երկարացվում է նույն ժամկետով, եթե ժամկետի վերջին հինգ օրը անձը դիմում չի ներկայացնում արգելքը վերացնելու մասին:».

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«3.Խաղային ինտերակտիվ հարթակով քաղաքացու կողմից ինքնաարգելափակման միջոցը (կոճակը) (self-exclusion) կիրառելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը համարվում է ներկայացված:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մասով՝

«4. Խաղային ինտերակտիվ հարթակում կազմակերպիչը պարտավոր է իր ինտերնետային կայքի և բջջային հավելվածի յուրաքանչյուր էջում ապահովել «ինքնաարգելափակում» անվանմամբ ինքնաարգելափակման միջոցի (կոճակի) (self-exclusion)մշտական, անմիջապես տեսանելի և հասանելի առկայությունը: Ինքնաարգելափակման միջոցը (կոճակը) պետք է զբաղեցնի տվյալ էջի տեսանելի հատվածի առնվազն 5 տոկոսը կամ համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշներին և տեղադրվի այնպես, որ այն մշտապես տեսանելի լինի՝ առանց հավելյալ որոնման, էջափոխման կամ այլ գործողությունների անհրաժեշտության: Ինքնաարգելափակման միջոցի (կոճակի) անմիջական հարևանությամբ պարտադիր ցուցադրվում է օպերատորի միասնական համակարգում տվյալ պահին գրանցված ինքնաարգելափակված անձանց ընդհանուր թիվը:

4.1. Ինքնաարգելափակման միջոցն ակտիվացնելուց հետո կազմակերպիչը պարտավոր է անձին ցուցադրել բացառապես մեկ հաստատման պատուհան՝ հետևյալ բովանդակությամբ.

«Դուք հաստատո՞ւմ եք, որ ցանկանում եք ինքնաարգելափակել Ձեր խաղերին մասնակցելու իրավունքը»:

Հաստատման պատուհանը պետք է պարունակի բացառապես հետևյալ երկու ընտրությունները՝

1. «Հաստատում եմ»,
2. «Չեմ հաստատում»:

4.2. Անձի կողմից «Հաստատում եմ» ընտրությունը կատարելու պահից ինքնաարգելափակման դիմումը համարվում է ներկայացված և ընդունված, իսկ կազմակերպիչը պարտավոր է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մեկ րոպեի ընթացքում, դադարեցնել անձի մասնակցությունը խաղերին և ապահովել ինքնաարգելափակման գործարկումը:

4.3. Անձի կողմից «Հաստատում եմ» ընտրությունից հետո կազմակերպչին արգելվում է՝

1. պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, լուսանկարներ, տեսագրություններ կամ այլ տեղեկություններ, բացառությամբ օրենքով պարտադիր նույնականացման տվյալների, որոնք առկա չեն,
2. սահմանել սպասման ժամանակահատված, հետաձգում, «մտածելու ժամկետ» կամ այլ ժամանակային սահմանափակումներ,

3. բացել լրացուցիչ պատուհաններ կամ պահանջել լրացուցիչ հաստատումներ,
4. ցուցադրել գովազդային նյութեր, բոնուսներ, խրախուսող առաջարկներ կամ այլ բովանդակություն, որոնք կարող են ազդել անձի որոշման վրա,
5. կատարել ցանկացած գործողություն կամ անգործություն, որի նպատակը կամ հետևանքը կարող է լինել ինքնաարգելափակման գործընթացի դժվարացումը, հետաձգումը կամ խոչընդոտումը,
6. անձին ինքնաարգելափակման միջոցը կիրառելուց հետո ուղղակի կամ անուղղակի կերպով ցանկացած եղանակով ուղարկել գովազդային, խրախուսող, բոնուսային կամ խաղերին մասնակցությունը խթանելուն ուղղված առաջարկներ, հաղորդագրություններ կամ այլ տեղեկատվություն, ներառյալ՝ հեռախոսազանգերի, կարճ հաղորդագրությունների (SMS), էլեկտրոնային փոստի, push ծանուցումների, սոցիալական ցանցերի կամ այլ կապի միջոցների միջոցով:

4.4. Ինքնաարգելափակման միջոցը (կոճակը) կիրառվելուց հետո կազմակերպիչը պարտավոր է դիմումը (ներառյալ՝ դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, հանրային ծառայությունների համարանիշը և դիմումի ներկայացման օրն ու ժամը) անհապաղ փոխանցել օպերատորին, իսկ մինչև օպերատորի գործունեության մեկնարկը՝ լիազոր մարմնին:

4.5.Սույն հոդվածով սահմանված ինքնաարգելման դրույթները գործելու են մինչև օպերատորի ներդրումից հետո կառավարության կողմից այլ նույնականացման պայմանների սահմանումը՝ օպերատորի միջոցով իրականացնելու հնարավորությամբ:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

~~ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ~~

~~*ԱՌԱՋԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ*~~

~~*Պ-1281[1]-13.03.2026-Տ<-011/1*~~

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 6.2. Քաղաքացիների՝ խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին մասնակցության սահմանափակումների ընդհանուր կանոնները

1. Արգելվում է այն քաղաքացիների մասնակցությունը սույն օրենքով նախատեսված շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, որոնք՝

~~1) օգտվել են պետական բյուջեի կողմից ֆինանսավորվող՝ արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքներով պայմանավորված՝ Կառավարության սահմանած աջակցության որևէ ծրագրից, և աջակցության տրամադրման իրավական ակտով սահմանված է խաղերին մասնակցության սահմանափակում.~~

~~2) օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված են ընտանիքների սոցիալական գնահատման համակարգում և ընտանիքի անապահովության հիմքով իրականացվող ծրագրի շահառու, ինչպես նաև պետական սոցիալական բնակարանային ֆոնդի կացարաններում բնակվող անձինք են.~~

~~3) գտնվում են սնանկության վարույթում կամ ճանաչվել են սնանկ կամ ունեն պետական բյուջեի նկատմամբ չմարված (չներված) պարտավորություններ.~~

~~4) հաշվառված են կախվածությունների բուժման ազգային կենտրոնում.~~

~~5) օգտվում են պետական բյուջեի ֆինանսավորմամբ կամ համաֆինանսավորմամբ իրականացվող սուբսիդավորման որևէ ծրագրից.~~

~~6) հանդիսանում են «Պետական նպաստների մասին» օրենքով նախատեսված որևէ տեսակի նպաստի նպաստառու.~~

~~7) ունեն սպառողական վարկ և վարկի ընդհանուր ծավալը գերանցանում է տարեկան եկամուտների 40%-ը.~~

~~8) օրենքով նախատեսված կենսաթոշակային տարիքը լրացած քաղաքացիների մասնակցությունը խաղերին, եթե տվյալ անձանց եկամտի միակ աղբյուրը նշանակված կենսաթոշակն է.~~

~~9) ներկայացրել են սույն օրենքի 6.3.-րդ հոդվածի 1-ին մասով դիմում:~~

~~2. Քաղաքացիների կողմից խաղերին մասնակցության թույլատրելի չափ է համարվում յուրաքանչյուր տարվա համար հայտարարագրված տարեկան եկամտի 20%-ը:~~

~~3. Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց նկատմամբ սույն հոդվածով սահմանված սահմանափակումները կիրառելի չեն:~~

~~4. Լիազոր մարմինը ապահովում է սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված տեղեկատվության հիման վրա նույնականացման արդյունքով քաղաքացու մասնակցությունը շահումով խաղերին, ինտերնետ շահումով խաղերին արգելված լինելու հանգամանքի պարզման հնարավորության ստեղծումը:~~

~~5. Սույն հոդվածով նախատեսված տեղեկատվությունը Կառավարության սահմանած կարգով վեբկայքի միջոցով տրամադրվում է լիազոր մարմնին, բացառությամբ այն անձանց վերաբերող տեղեկատվության, որն օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն: Սույն հոդվածով նախատեսված սահմանափակման կիրառման նպատակով այն անձանց նույնականացումը, որոնց վերաբերյալ տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, իրականացվում է խաղացողների կողմից խաղային հաշիվների համալրումը սույն օրենքով սահմանված կարգով անկանխիկ եղանակով իրականացնելու ժամանակ՝ Լիազոր մարմնի և Կենտրոնական բանկի համատեղ իրավական ակտով սահմանված կարգով:~~

~~6. Խաղացողի կողմից խաղի մասնակցության համար օգտագործվող համապատասխան համացանցային հաղորդակարգի (IP) հասցեի պարբերաբար փոփոխությունը կարող է համարվել ռիսկային և հիմք հանդիսանալ խաղացողի նկատմամբ սույն մասով նախատեսված սահմանափակումները կիրառելու համար: Սույն մասով նախատեսված ռիսկային համարվելու չափանիշները և սահմանափակումների կիրառման կարգը սահմանում է Կառավարությունը:~~

1. Արգելվում է այն քաղաքացիների մասնակցությունը սույն օրենքով նախատեսված շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, որոնք՝

4) խաղադրույքներ են կատարում իրենց անվամբ բացված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ և 928.9-րդ հոդվածների 1-ին մասերով սահմանված հատուկ բանկային հաշիվների միջոցներից»:

5) ներկայացրել են սույն օրենքի 6.3.-րդ հոդվածի 1-ին մասով դիմում:

6) հանդիսանում են պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոններ զբաղեցնող անձիք, հանրային իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների, Կենտրոնական բանկի աշխատակիցներ:

Հոդված 6.3. Քաղաքացու կողմից իր մասնակցության սահմանափակման կարգը

1. Լիազոր մարմնին ներկայացվող դիմումով քաղաքացին կարող է պահանջել արգելելու իր մասնակցությունը շահումով խաղերին և ինտերնետ շահումով խաղերին: Լիազոր մարմինը ապահովում է նշված տեղեկատվության հասանելիությունը կազմակերպչին:

~~2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց մասնակցությունը խաղերին արգելվում է քաղաքացու դիմումի հիման վրա՝ դիմումի ներկայացման հաջորդ օրվանից 5 տարի ժամկետով: Ընդ որում յուրաքանչյուր ժամկետի ավարտից հետո այն կրկին երկարացվում է նույն ժամկետով, եթե ժամկետի վերջին հինգ օրը անձը դիմում չի ներկայացնում արգելքը վերացնելու մասին:~~

~~3. ինտերնետ շահումով խաղի կազմակերպչի ինտերնետային էջով (կայքով) քաղաքացու կողմից ինքնաարգելափակման միջոցը (self-exclusion) կիրառելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը համարվում է ներկայացված:~~

~~4. ինտերնետ շահումով խաղի կազմակերպիչը իր ինտերնետային էջում (կայքում) պարտավոր է ապահովել հստակ տեսանելի ինքնաարգելափակման (self-exclusion) միջոցի առկայությունը: Ինքնաարգելափակման (self-exclusion) միջոցը կիրառվելվելուց հետո կազմակերպիչը պարտավոր է դիմումը անմիջապես փոխանցել լիազոր մարմնին:~~

2.Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց մասնակցությունը խաղերին արգելվում է քաղաքացու դիմումի հիման վրա՝ դիմումի ներկայացման հաջորդ օրվանից 5 տարի ժամկետով: Ընդ որում յուրաքանչյուր ժամկետի ավարտից հետո այն կրկին երկարացվում է նույն ժամկետով, եթե ժամկետի վերջին հինգ օրը անձը դիմում չի ներկայացնում արգելքը վերացնելու մասին:».

3.Խաղային ինտերակտիվ հարթակով քաղաքացու կողմից ինքնաարգելափակման միջոցը (կոճակը) (self-exclusion) կիրառելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը համարվում է ներկայացված:».

4. Խաղային ինտերակտիվ հարթակում կազմակերպիչը պարտավոր է **իր ինտերնետային կայքի և բջջային հավելվածի յուրաքանչյուր էջում ապահովել «ինքնաարգելափակում» անվանմամբ ինքնաարգելափակման միջոցի** (կոճակի) **(self-exclusion)մշտական, անմիջապես տեսանելի և հասանելի առկայությունը: Ինքնաարգելափակման միջոցը** (կոճակը) **պետք է զբաղեցնի տվյալ էջի տեսանելի հատվածի առնվազն 5 տոկոսը կամ համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշներին և տեղադրվի այնպես, որ այն մշտապես տեսանելի լինի՝ առանց հավելյալ որոնման, էջափոխման կամ այլ գործողությունների անհրաժեշտության:**

Ինքնաարգելափակման միջոցի (կոճակի) անմիջական հարևանությամբ պարտադիր ցուցադրվում է օպերատորի միասնական համակարգում տվյալ պահին գրանցված ինքնաարգելափակված անձանց ընդհանուր թիվը:

4.1. Ինքնաարգելափակման միջոցն ակտիվացնելուց հետո կազմակերպիչը պարտավոր է անձին ցուցադրել բացառապես մեկ հաստատման պատուհան՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Դուք հաստատո՞ւմ եք, որ ցանկանում եք ինքնաարգելափակել Ձեր խաղերին մասնակցելու իրավունքը»:

Հաստատման պատուհանը պետք է պարունակի բացառապես հետևյալ երկու ընտրությունները՝

3. «Հաստատում եմ»,
4. «Չեմ հաստատում»:

4.2. Անձի կողմից «Հաստատում եմ» ընտրությունը կատարելու պահից ինքնաարգելափակման դիմումը համարվում է ներկայացված և ընդունված, իսկ կազմակերպիչը պարտավոր է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մեկ րոպեի ընթացքում, դադարեցնել անձի մասնակցությունը խաղերին և ապահովել ինքնաարգելափակման գործարկումը:

4.3. Անձի կողմից «Հաստատում եմ» ընտրությունից հետո կազմակերպչին արգելվում է՝

7. պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, լուսանկարներ, տեսագրություններ կամ այլ տեղեկություններ, բացառությամբ օրենքով պարտադիր նույնականացման տվյալների, որոնք առկա չեն,
8. սահմանել սպասման ժամանակահատված, հետաձգում, «մտածելու ժամկետ» կամ այլ ժամանակային սահմանափակումներ,
9. բացել լրացուցիչ պատուհաններ կամ պահանջել լրացուցիչ հաստատումներ,
10. ցուցադրել գովազդային նյութեր, բոնուսներ, խրախուսող առաջարկներ կամ այլ բովանդակություն, որոնք կարող են ազդել անձի որոշման վրա,
11. կատարել ցանկացած գործողություն կամ անգործություն, որի նպատակը կամ հետևանքը կարող է լինել ինքնաարգելափակման գործընթացի դժվարացումը, հետաձգումը կամ խոչընդոտումը,

12. անձին ինքնաարգելափակման միջոցը կիրառելուց հետո ուղղակի կամ անուղղակի կերպով ցանկացած եղանակով ուղարկել գովազդային, խրախուսող, բոնուսային կամ խաղերին մասնակցությունը խթանելուն ուղղված առաջարկներ, հաղորդագրություններ կամ այլ տեղեկատվություն, ներառյալ՝ հեռախոսազանգերի, կարճ հաղորդագրությունների (SMS), էլեկտրոնային փոստի, push ծանուցումների, սոցիալական ցանցերի կամ այլ կապի միջոցների միջոցով:

4.4. Ինքնաարգելափակման միջոցը (կոճակը) կիրառվելուց հետո կազմակերպիչը պարտավոր է դիմումը (ներառյալ՝ դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, հանրային ծառայությունների համարանիշը և դիմումի ներկայացման օրն ու ժամը) անհապաղ փոխանցել օպերատորին, իսկ մինչև օպերատորի գործունեության մեկնարկը՝ լիազոր մարմնին:

4.5.Սույն հոդվածով սահմանված ինքնաարգելման դրույթները գործելու են մինչև օպերատորի ներդրումից հետո կառավարության կողմից այլ նույնականացման պայմանների սահմանումը՝ օպերատորի միջոցով իրականացնելու հնարավորությամբ:

Հոդված 7. Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, կազմակերպման և անցկացման կանոնակարգը

1. Շահումով խաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգում պետք է նշվեն՝
ա) հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը.
բ) հայտատուի գտնվելու և գործունեության իրականացման վայրերը.
գ) իրականացվող շահումով խաղերի տեսակները (մեքենայացված և/կամ կենդանի) և քանակը.
դ) շահումով խաղի մեկ տոմսի և (կամ) խաղանիշի (ժետոնի) և (կամ) միավորի գինը.
ե) խաղի անցկացման կարգը.
զ) շահումի տարբերակները.
է) շահումները վճարելու վայրը.
ը) խաղացողների իրավունքներն ու պարտականությունները.
թ) կազմակերպչի իրավունքներն ու պարտականությունները:
1.1. Ինտերնետ շահումով խաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգում պետք է նշվեն՝
ա) հայտատուի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).
բ) հայտատուի գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, ինտերնետային էջի (կայքի) հասցեն.
գ) տեղեկատվություն շահագործվող ծրագրերի վերաբերյալ.
դ) իրականացվող շահումով խաղերի տեսակները և քանակը.
ե) շահումով խաղի մեկ տոմսի և (կամ) խաղանիշի (ժետոնի) և (կամ) միավորի գինը.
զ) խաղի անցկացման կարգը.
է) շահումի տարբերակները.
ը) մասնակցության համար նախատեսված վճարների ընդունման կարգը.

թ) շահումները վճարելու կարգը (վայրը).

ժ) խաղացողների իրավունքներն ու պարտականությունները.

ժա) կազմակերպչի իրավունքներն ու պարտականությունները:

1.2. Կազմակերպչի ինտերնետային էջում (կայքում) պետք է առնվազն նշված լինեն՝

ա) կազմակերպչի անվանումը.

բ) գտնվելու և գործունեության իրականացման վայրերը.

գ) լիցենզիայի համարը.

դ) իրականացվող շահումով խաղերի տեսակները և քանակը.

ե) քսանմեկ տարին չլրացած ֆիզիկական անձանց ինտերնետ շահումով խաղերին մասնակցելը արգելվում է.

զ) խաղերի նկարագրերը, անցկացման կարգերը (կանոնները) կամ ինտերնետային էջի հասցեն, որտեղ կարելի է ծանոթանալ այդ տեղեկատվությանը.

է) շահումով խաղի մեկ տոմսի և (կամ) խաղանիշի (ժետոնի) և (կամ) միավորի գինը.

ը) շահումի տարբերակները.

թ) մասնակցության համար նախատեսված վճարների ընդունման կարգը.

ժ) շահումները վճարելու կարգը.

ժա) խաղացողների իրավունքներն ու պարտականությունները.

ժբ) կազմակերպչի իրավունքներն ու պարտականությունները.:

~~ժգ) ինքնաարգելափակման (self-exclusion) միջոց:~~

Կազմակերպչի ինտերնետային էջում (կայքում) արտացոլված վավերապայմանները համարվում են լիազոր մարմնի հետ համաձայնեցված՝ համապատասխան ինտերնետ շահումով խաղի կազմակերպման կանոնակարգի անբաժանելի մասը:

2. Շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգը լիազոր մարմնի համաձայնեցմանն է ներկայացվում տվյալ վայրում լիցենզիա ստանալու հայտի հետ միասին:

3. Շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգում կատարվող փոփոխություններն ու լրացումները կազմակերպիչը համաձայնեցնում է լիազոր մարմնի հետ՝ նախքան դրանց կիրառումը, փոփոխությունները ներկայացնելով լիազոր մարմին՝ երկու օրինակից:

Լիազոր մարմինը 15-օրյա՝ շահումով խաղի կազմակերպման դեպքում և 30-օրյա՝ ինտերնետ շահումով խաղի կազմակերպման դեպքում ժամկետում ընդունում է որոշում՝ կանոնակարգում առաջարկվող փոփոխություններին համաձայնություն տալու կամ դրանք մերժելու մասին: Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում տրամադրվում (փոստով առաքվում) է կազմակերպչին:

Եթե լիազոր մարմինն ընդունել է կանոնակարգի փոփոխություններին վերապահումով համաձայնություն տալու մասին որոշում, ապա կազմակերպիչը պարտավոր է այդ որոշումը ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, լիազոր մարմին ներկայացնել ուղղված փաստաթղթերը, որից հետո լիազոր մարմինը 5-օրյա ժամկետում հայտատուին տրամադրում է լիազոր մարմնի հետ համաձայնեցված շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգում կատարված փոփոխության մեկ օրինակը: Եթե կազմակերպիչը վերը նշված որոշումն ընդունելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, ուղղված փաստաթղթերը լիազոր մարմին չի ներկայացնում, ապա լիազոր մարմնի որոշումը՝ կանոնակարգի փոփոխություններին վերապահումով համաձայնություն տալու վերաբերյալ, համարվում է չեղյալ:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված փոփոխություններին և լրացումներին լիազոր մարմինը չի տալիս իր համաձայնությունը, եթե դրանք՝

ա) հակասում են Հայաստանի Հանրապետության օրենքներին կամ իրավական այլ ակտերին.

բ) կվտանգեն խաղացողների շահերը.

գ) հակասում են սույն հոդվածի 1-ին մասի պահանջներին կամ 5-րդ մասի հիման վրա սահմանված կանոններին:

5. Նույն տեսակի կենդանի խաղերի համար Հայաստանի Հանրապետությունում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված նույն կանոնները, ընդ որում, կազմակերպիչն ազատ է քայլերի մեծության ընտրության հարցում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-1281-13.03.2026-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի լրացվող 6.2-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ 4-րդ և 5-րդ կետերին, «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին»	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մասով հարկ է նշել, որ նախագծերով առաջարկվող մի շարք կարգավորումներ ներկայումս կիրառելի չեն՝ հաշվի առնելով, որ բացակայում են	**Ընդունվել է:** Նախագծերի 1-ին հոդվածով լրացվող համապատասխան աբար 6.2-րդ և 5.4-րդ հոդվածներից հանվել են համապատասխան կետերը:	**Ընդունվել է:**

		Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող նոր 5.4-րդ հոդվածի1-ին, 2-րդ, 3-րդ 4-րդ և 5-րդ կետերին, .	դրանց ապահովման համար անհրաժեշտ ինքնաշխատ գործիքներն ու գործնական մեխանիզմները, որոնց գործարկմամբ հնարավոր կլինի ապահովել համապատասխան գործընթացների իրականացումը: Վերոգրյալի տեսանկյունից խնդրահարույց է նաև Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով լրացվող Օրենքի 47-րդ հոդվածի 7-րդ և Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով Օրենքի 50-րդ հոդվածում կատարվող լրացումն ու փոփոխությունները: Նշված սահմանափակումների գործնական կիրառելիության տեսանկյունից կարող են առաջանալ որոշ խնդիրներ, մասնավորապես՝ արգելքի/սահմանափակման կիրառումն ապահովող սուբյեկտը՝ օպերատորը, չի կարող ունենալ հասանելիություն այնպիսի տեղեկատվության, ինչպիսիք են եկամուտների առկայությունը, դրանց կազմը/աղբյուրները, չափը		

			կամ անձի ունեցած վարկերի չափը և քանակները, ուստի անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչպես են պարզվելու վերոգրյալ հանգամանքները: Նախևառաջ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել այն հանգամանքը, որ դեռևս 2022 թվականին «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի նախագծի շրջանառության ժամանակ նշվել է, որ այդ նախագծով առաջարկվող համակարգն ինքնին պահանջում է մեծ ֆինանսական, տեխնիկական և համապատասխան մարդկային ռեսուրսներ, որոնց կապակցությամբ բացակայում է պահանջվող հանրային ծախսերի գնահատականը, ինչի արդյունքում հնարավոր չէ պատկերացում կազմել նման համակարգի ծախս-արդյունավետ լինելու կամ չլինելու մասին, բացի այդ, հնարավոր չէ կանխատեսել սոցիալ-տնտեսական, ինչպես նաև հարկաբյուջետային արդյունքները:		

			Ավելին, հարկ է նշել, որ նախագծերով առաջարկվող սահմանափակումները խնդրահարույց են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ յուրաքանչյուր անձի սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքի տեսանկյունից՝ նկատի ունենալով, որ նման սահմանափակումներ նախատեսելը կարող է հանգեցնել սեփականության իրավունքի սահմանափակման, մինչդեռ ընդգծենք, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է, որ այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով, ընդ որում, այդ սահմանափակումը պետք է համապատասխանի որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին և չի կարող գերազանցել ՀՀ		

			միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները: Միաժամանակ, իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու համար առաջարկում ենք հստակեցնել «և վարկի ընդհանուր ծավալը գերազանցում է տարեկան եկամուտների 40%-ը» չափանիշի սահմանումը՝ հաշվի առնելով, որ նման չափանիշի սահմանումը պահանջում է հստակ հաշվարկման մեթոդաբանություն և միասնական կիրառելիություն: Նախագծերով առաջարկվում է սահմանել, որ քաղաքացիների կողմից շահումով խաղերին մասնակցության թույլատրելի չափ է համարվում յուրաքանչյուր տարվա համար հայտարարագրված տարեկան եկամտի 20 տոկոսը: Այս առումով, նախ առաջարկում ենք ըստ անհրաժեշտության հաշվի առնել, որ ՀՀ կառավարության 2026		

			թվականի փետրվարի 26-ի թիվ 225-Ն որոշման համաձայն՝ մի շարք նվազեցվող եկամուտներ պարտադիր հայտարագրման ենթակա չեն: Օրինակ՝ հայտարարագրման ենթակա չեն մինչև 1 մլն դրամը ներառյալ ստացված փոխառությունների գումարները: Ավելին, հայտարարագրման ենթակա չեն ընտանիքի անդամներից ստացվող՝ նվազեցվող (չհարկվող) եկամուտները: Բացի այդ, առաջարկում ենք հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ առաջարկվող սահմանափակումը շրջանցելու հնարավորությունները շատ ակնհայտ են, քանի որ ֆիզիկական անձինք կարող են հայտարարագրում ներառել հարկային հետևանքներ չունեցող եկամուտներ (եկամտային հարկով հարկման նպատակով նվազեցվող (չհարկվող) համարվող եկամուտներ)՝ դրանով իսկ առանց որևէ հետևանքի ավելացնելով խաղադրույքներ կատարելու իրենց		

			հնարավորությունները: Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով լրացվող 5-րդ կետի համաձայն՝ արգելվում է այն քաղաքացիների մասնակցությունը սույն օրենքով նախատեսված խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, որոնք՝ օգտվում են պետական բյուջեի ֆինանսավորմամբ կամ համաֆինանսավորմամբ իրականացվող սուբսիդավորման որևէ ծրագրից: Այս առումով հայտնում ենք, որ Նախագծով առաջարկվող փոփոխությունները ընդունվելու պարագայում ստեղծվում է մի իրավիճակ, երբ պետության կողմից երբևէ որևէ աջակցություն (օրինակ նաև՝ եկամտահարկի հետվերադարձի ծրագրով կամ այլ սուբսիդիոն ծրագրերով) ստացած անձը զրկվում է իր եկամուտները տնօրինելու իրավունքից, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված խաղային		

			կազմակերպիչների մոտ խաղադրույք կատարելու հնարավորությունից: Ուստի, առաջարկվող սահմանափակումը փաստացի տարածվելու է նաև սոցիալապես խոցելի չհամարվող խմբերի վրա: Ուստի առաջարկում ենք քննարկել նշված կարգավորման նպատակահարմարության հարցը: Վերոնշյալ առաջարկությունները վերաբերում են նաև «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի համանման կարգավորումներին: Միաժամանակ առաջարկում ենք Նախագծի անցումային դրույթներով կարգավորել, թե արդյոք Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով լրացվող 5-րդ կետով սահմանվող		

			սահմանափակումները տարածվելու են ներկայումս շահառու հանդիսացող անձանց, թե Նախագիծն ուժի մեջ մտնելուց հետո շահառուի կարգավիճակ ստացող անձանց վրա:		
2.	ՀՀ կառավարություն	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի նախագծի 1-ին հոդվածի լրացվող 6.2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող նոր 5.4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին: «Խաղային գործունեության կարգավորման	Ձեռնպահ մնալ նախագծով առաջարկվող՝ սպառողական վարկ ունեցող և վարկային պարտավորությունների ընդհանուր ծավալը տարեկան եկամուտների նկատմամբ որոշակի շեմով սահմանափակելու կարգավորումից՝ հաշվի առնելով, որ դրա կիրառման համար անհրաժեշտ տեղեկատվական և տեխնիկական նախադրյալները ներկայումս ամբողջությամբ ձևավորված չեն: Մասնավորապես, նշված կարգավորման կիրառումը ենթադրում է վարկային պարտավորությունների վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկատվության առկայություն, որը հանդիսանում է բանկային գաղտնիք: Խաղային գործունեության կարգավորման օպերատորի	**Ընդունվել է:** Նախագծերի 1-րդ հոդվածների համապատասխան մասերում կատարվել են համապատասխան փոփոխություններ՝ հանվել են սպառողական վարկի և վարկային պարտավորությունների հետ կապված կարգավորումները:	**Ընդունվել է:**

		մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով 47-րդ հոդվածում լրացվող 7-րդ մասին:	գործարկումից հետո օպերատորը կարող է հասանելիություն ունենալ միայն այն տվյալներին, որոնց վերաբերյալ պետությունը վարում է համապատասխան շտեմարաններ:		
3.	ՀՀ կառավարություն	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի նախագծի 1-ին հոդվածի լրացվող 6.2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող նոր 5.4-րդ հոդվածի 1-ն մասի 7 -րդ կետին: «Խաղային	Ձեռնպահ մնալ նախագծով առաջարկվող՝ խաղերին մասնակցության թույլատրելի չափը յուրաքանչյուր տարվա համար հայտարարագրված տարեկան եկամտի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ սահմանելու կարգավորումից՝ հաշվի առնելով, որ դրա գործնական կիրառումը ներկայումս խնդրահարույց է և վաղաժամ: Միաժամանակ, տարեկան եկամտի չափի վրա հիմնված սահմանափակումը կարող է չարտացոլել անձի իրական ֆինանսական կարողությունները, քանի որ հնարավոր են իրավիճակներ, երբ անձը տվյալ տարում հայտարարագրված եկամուտ չունենալով հանդերձ ունի	**Ընդունվել է:** Նախագծերի համապատասխան հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ՝ հանվել են խաղերին մասնակցության թույլատրելի չափը յուրաքանչյուր տարվա համար հայտարարագրված տարեկան եկամտի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ սահմանելու կարգավորումները:	**Ընդունվել է:**

		գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածին:	զգալի խնայողություններ, ինչի արդյունքում նշված մոտեցումը չի ապահովում կարգավորման նպատակային և համաչափ կիրառություն:		
4.	ՀՀ կառավարություն	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի նախագծի 1-ին հոդվածի լրացվող 6.2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին, «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող նոր 5.4-րդ հոդվածի 1-ն մասի 5-րդ կետին:	3. Առաջարկում ենք հստակեցնել պետական բյուջեի ֆինանսավորմամբ կամ համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերից օգտվող շահառուների շրջանակը, քանի որ որոշ ծրագրեր կրում են տնտեսական կամ խթանիչ բնույթ և անմիջականորեն կապված չեն անձի սոցիալական վիճակի հետ: Այս համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել, որ եկամտային հարկի վերադարձի ծրագիրը պարունակում է նաև սոցիալական բաղադրիչ, ուստի նպատակահարմար ենք համարում լրացուցիչ քննարկել նոր շահառուների նկատմամբ սահմանափակումների կիրառման հարցը:	**Ընդունվել է:** Նախագծերի 1-ին հոդվածով լրացվող համապատասխան աբար 6.2-րդ և 5.4-րդ հոդվածներից հանվել են համապատասխան կարգավորումները:	**Ընդունվել է:**

			4. Ընդունելի ենք համարում նախագծերով սահմանված քաղաքացու կողմից իր մասնակցության սահմանափակման և ինքնաարգելափակման կարգերի խմբագրված տարբերակները և այն առաջարկությունը, որ Նախագծերով սահմանված ինքնաարգելման դրույթները գործելու են մինչև օպերատորի ներդրումից հետո կառավարության կողմից այլ նույնականացման պայմանների սահմանումը՝ օպերատորի միջոցով իրականցնելու հնարավորությամբ:		
5.	ՀՀ կառավարություն	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 6.2-րդ հոդվածի 1-ին մասին:	1. Նախագծի 1-ին հոդվածի՝ «Հոդված 6.2. Քաղաքացիների՝ խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին մասնակցության սահմանափակումների ընդհանուր կանոնները 1. Արգելվում է այն	**Ընդունվել է:** Նախագծի 1-րդ ին հոդվածով լրացվող 6.2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 8-րդ կետերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

			քաղաքացիների մասնակցությունը սույն օրենքով նախատեսված շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, որոնք՝ ... 8) օրենքով նախատեսված կենսաթոշակային տարիքը լրացած քաղաքացիների մասնակցությունը խաղերին, եթե տվյալ անձանց եկամտի միակ աղբյուրը նշանակված կենսաթոշակն է.»: Այսինքն, նախագծով լրացվող՝ Օրենքի 6.2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը խմբագրական առումով չի համապատասխանում հոդվածի բովանդակությանը: Բացի այդ, հստակ չէ «օրենքով նախատեսված տարիքը լրացած» ձևակերպումը, քանի որ կենսաթոշակի առանձին տեսակների համար օրենքով նախատեսված են կենսաթոշակի իրավունք տվող տարբեր տարիքներ, իսկ առանձին դեպքերում տարիքային պահանջ չկա (օրինակ՝ հաշմանդամության		

			զինվորական կենսաթոշակի դեպքում): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն հոդվածի 6-րդ կետով արգելվում է «Պետական նպաստների մասին» օրենքով նախատեսված որևէ տեսակի նպաստի նպաստառուի, իսկ 8-րդ կետով՝ գործնականում կենսաթոշակառուների մասնակցությունը խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, առաջարկվում է՝ Նախագծով լրացվող՝ Օրենքի 6.2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Արգելվում է այն քաղաքացիների մասնակցությունը սույն օրենքով նախատեսված շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, որոնք՝ 1) խաղադրույքներ են կատարում իրենց անվամբ բացված՝ Հայաստանի		

			Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ և 928.9-րդ հոդվածների 1-ին մասերով սահմանված հատուկ բանկային հաշիվների միջոցներից. 2) ներկայացրել են սույն օրենքի 6.3.-րդ հոդվածի 1-ին մասով դիմում: 3) հանդիսանում են պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոններ զբաղեցնող անձիք, հանրային իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների, Կենտրոնական բանկի աշխատակիցներ:»: Առաջարկը քննարկելիս հարկ է նկատի ունենալ, որ որ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն և 2020 թվականի մարտի 12-ի N 287-Ն		

			որոշումների 3-րդ կետերով սահմանված են այն գումարները, որոնք վճարվում են սոցիալական ապահովության հաշվին և միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրելու միջոցով: Ընդ որում, եթե անձը նույն բանկի միջոցով միաժամանակ ստանում է մի քանի պարբերական վճարատեսակ (օրինակ, հաշմանդամության կենսաթոշակ, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ, անապահովության նպաստ), ապա այս գումարները տարանջատել հնարավոր չէ, քանի որ շահառուին վճարվող բոլոր պարբերական դրամական վճարների գումարները բանկը մուտքագրում է շահառուի անվամբ բացված նույն բանկային հաշվին: Միանվագ բնույթի վճարները վճարվում են առանձին բանկային հաշիվներով, 2. Նախագծից հանել 3-րդ հոդվածը: 3. Նախագծի 4-րդ հոդվածից հանել 2-րդ մասը:		

6.	ՀՀ կառավարություն	«Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում՝ 1-ին հոդվածով լրացվող 5.4-րդ հոդվածին :	1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն նախագծի 1-ին հոդվածով «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացվող 5.4-րդ հոդվածը բովանդակային առումով նույնն է, ինչ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող 6.2-րդ հոդվածը, առաջարկվում է կատարել նույնաբովանդակ փոփոխություններ: Նախագծի 1-ին հոդվածով լրացվող՝ Օրենքի 5.4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «*Հոդված 5.4. Քաղաքացիների՝ խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին մասնակցության սահմանափակումների ընդհանուր կանոնները* 1. Արգելվում է այն քաղաքացիների մասնակցությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող	**Ընդունվել է:** Նախագծում՝ 1-ին հոդվածով լրացվող 5.4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 8-րդ կետերում կատարվել համապատասխան փոփոխություններ:	**Ընդունվել է:**

			տոտալիզատորների (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորների), որոնք՝ 1) խաղադրույքներ են կատարում իրենց անվամբ բացված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ և 928.9-րդ հոդվածների 1-ին մասերով սահմանված հատուկ բանկային հաշիվների միջոցներից. 2) ներկայացրել են սույն օրենքի 5.5.-րդ հոդվածի 1-ին մասով դիմում: հանդիսանում են պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոններ զբաղեցնող անձիք, հանրային իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների, Կենտրոնական		

			բանկի աշխատակիցներ:»: 2. Նախագծի 3-րդ հոդվածից հանել 2-րդ մասը:		
7.	ՀՀ կառավարություն	«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածին և 2-րդ հոդվածին	1. Նախագծի 1-ին հոդվածով օրենքի 47-րդ հոդվածում առաջարկվող փոփոխությունները շարադրել հետևյալ բովանդակությամբ. «1) 1-ին մասի 4-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով. 2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով. «5) սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո դիմել և հաստատվել են, որպես հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարի չափով վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման ծրագրի շահառու. 6) հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հատուկ բանկային հաշիվների շահառուներ. 7) խաղադրույքներ են կատարում իրենց անվամբ բացված՝	**Ընդունվել է:** Նախագծի համապատասխան հոդվածները և համարակալումը խմբագրվել են:	**Ընդունվել է:**

			Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.9-րդ հոդվածների 1-ին մասով սահմանված հատուկ բանկային հաշիվների միջոցներից:», 3) 2-րդ մասի 1-ին կետը «չլրացած» բառից հետո լրացնել «, ինչպես նաև յոթանասուն և ավելի տարիք ունեցող» բառերով. 4) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով. «4.) պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց, հանրային իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրված հիմնադրամների, հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների, Կենտրոնական բանկի աշխատակիցների մասնակցությունը շահումով խաղերին և ինտերնետ շահումով խաղերին և բուքմեյքերական գործունեությանը.»: 2. Սահմանել, որ օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից՝ հաշվի առնելով, որ խաղային գործունեության կարգավորման օպերատորի ընտրության		

			գործընթացը գտնվում է ընթացքի մեջ, և նախագծով նախատեսված սահմանափակումների կիրառման համար անհրաժեշտ տեխնիկական հնարավորությունների ապահովումը հնարավոր կլինի միայն օպերատորի գործարկումից հետո: Նշված պայմաններում, ավելի վաղ ժամկետ սահմանելու դեպքում, սահմանափակումների ապահովման պարտականությունը փաստացի կդրվի խաղային գործունեության կազմակերպիչների վրա, ինչը ենթադրում է նրանց կողմից անձնական տվյալների մշակման և համապատասխան տեղեկատվական բազաների հասանելիության անհրաժեշտություն և կարող է առաջացնել տվյալների պաշտպանության և ազգային անվտանգության հետ կապված ռիսկեր:		
2.	**ՀՀ ԱԺ պատգամավոր** **Հայկ Սարգսյան**	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի նախագծի 2-րդ հոդվածին, «Վիճակախաղերի մասին» օրենքում	***Առաջարկվում է Հոդված 2.*** Օրենքի 49-րդ հոդվածում՝ 1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ. «2.Սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց մասնակցությունը խաղերին արգելվում է քաղաքացու դիմումի հիման վրա՝ դիմումի ներկայացման հաջորդ օրվանից 5 տարի ժամկետով: Ընդ որում	**Ընդունվել է:** Նախագծի համապատասխան հոդվածները խմբագրվել են:	**Ընդունվել է:**

		լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածին: «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածին:	յուրաքանչյուր ժամկետի ավարտից հետո այն կրկին երկարացվում է նույն ժամկետով, եթե ժամկետի վերջին հինգ օրը անձը դիմում չի ներկայացնում արգելքը վերացնելու մասին:». 2) 3-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «3.Խաղային ինտերակտիվ հարթակով քաղաքացու կողմից ինքնաարգելափակման միջոցը (կոճակը) (self-exclusion) կիրառելու դեպքում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դիմումը համարվում է ներկայացված:». 3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մասով՝ «4. Խաղային ինտերակտիվ հարթակում կազմակերպիչը պարտավոր է իր ինտերնետային կայքի և բջջային հավելվածի յուրաքանչյուր էջում ապահովել «ինքնաարգելափակում» անվանմամբ ինքնաարգելափակման միջոցի (կոճակի) (self-exclusion) մշտական, անմիջապես տեսանելի և հասանելի առկայությունը: Ինքնաարգելափակման միջոցը (կոճակը) պետք է զբաղեցնի տվյալ էջի տեսանելի հատվածի առնվազն		

			5 տոկոսը կամ համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափանիշներին և տեղադրվի այնպես, որ այն մշտապես տեսանելի լինի՝ առանց հավելյալ որոնման, էջափոխման կամ այլ գործողությունների անհրաժեշտության: Ինքնաարգելափակման միջոցի (կոճակի) անմիջական հարևանությամբ պարտադիր ցուցադրվում է օպերատորի միասնական համակարգում տվյալ պահին գրանցված ինքնաարգելափակված անձանց ընդհանուր թիվը: **4.1.** Ինքնաարգելափակման միջոցն (կոճակն) ակտիվացնելուց հետո կազմակերպիչը պարտավոր է անձին ցուցադրել բացառապես մեկ հաստատման պատուհան՝ հետևյալ բովանդակությամբ. «Դուք հաստատո՞ւմ եք, որ ցանկանում եք ինքնաարգելափակել Ձեր խաղերին մասնակցելու իրավունքը»: Հաստատման պատուհանը պետք		

			է պարունակի բացառապես հետևյալ երկու ընտրությունները՝ 1. «Հաստատում եմ», 2. «Չեմ հաստատում»: 4.2. Անձի կողմից «Հաստատում եմ» ընտրությունը կատարելու պահից ինքնաարգելափակման դիմումը համարվում է ներկայացված և ընդունված, իսկ կազմակերպիչը պարտավոր է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մեկ րոպեի ընթացքում, դադարեցնել անձի մասնակցությունը խաղերին և ապահովել ինքնաարգելափակման գործարկումը: 4.3. Անձի կողմից «Հաստատում եմ» ընտրությունից հետո կազմակերպչին արգելվում է՝ 1. պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, լուսանկարներ, տեսագրություններ կամ այլ տեղեկություններ, բացառությամբ օրենքով պարտադիր նույնականացման տվյալների, որոնք առկա չեն,		

			2. սահմանել սպասման ժամանակահատված, հետաձգում, «մտածելու ժամկետ» կամ այլ ժամանակային սահմանափակումներ, 3. բացել լրացուցիչ պատուհաններ կամ պահանջել լրացուցիչ հաստատումներ, 4. ցուցադրել գովազդային նյութեր, բոնուսներ, խրախուսող առաջարկներ կամ այլ բովանդակություն, որոնք կարող են ազդել անձի որոշման վրա, 5. կատարել ցանկացած գործողություն կամ անգործություն, որի նպատակը կամ հետևանքը կարող է լինել ինքնաարգելափակման գործընթացի դժվարացումը, հետաձգումը կամ խոչընդոտումը, 6. անձին ինքնաարգելափակման միջոցը կիրառելուց հետո ուղղակի կամ անուղղակի կերպով ցանկացած եղանակով ուղարկել գովազդային, խրախուսող,		

			բոնուսային կամ խաղերին մասնակցությունը խթանելուն ուղղված առաջարկներ, հաղորդագրություններ կամ այլ տեղեկատվություն, ներառյալ՝ հեռախոսազանգերի, կարճ հաղորդագրությունների (SMS), էլեկտրոնային փոստի, push ծանուցումների, սոցիալական ցանցերի կամ այլ կապի միջոցների միջոցով: 4.4. Ինքնաարգելափակման միջոցը (կոճակը) կիրառվելուց հետո կազմակերպիչը պարտավոր է դիմումը (ներառյալ՝ դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, հանրային ծառայությունների համարանիշը և դիմումի ներկայացման օրն ու ժամը) անհապաղ փոխանցել օպերատորին, իսկ մինչև օպերատորի գործունեության մեկնարկը՝ լիազոր մարմնին: 4.5.Սույն հոդվածով սահմանված ինքնաարգելման դրույթները գործելու են մինչև օպերատորի		

			ներդրումից հետո կառավարության կողմից այլ նույնականացման պայմանների սահմանումը՝ օպերատորի միջոցով իրականցնելու հնարավորությամբ: 2. Առաջարկվում է կատարել նույնաբովանդակ փոփոխություններ նաև «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածում:		